Հայ գրականության օլիմպիադայի մարզային փուլի հարցաշար

IX դասարան

(տևողությունը՝ 120 րոպե)

Սիրելի՛ մասնակից

Գարնանային բազմաթույր ծաղիկները թող հաղթանակի դափնի դառնան և զարդարեն քո անցնելիք ճանապարհը : Հաջողությո՛ւն:

1.Համեմատի՛ր Հովհաննես Թումանյանի «Փարվանա»բալլադը և Ավետիք Իսահակյանի «Հավերժական սերը» լեգենդը: Ի՞նչ ընդհանրություններ ունեն. ինչի՞ հիման վրա են ստեղծվել այս գլուխգործոցները: 5մ.

2.Նկարագրի՛ր Լևոնին՝Շիրվանզադեի «Արտիստը»վիպակի գլխավոր հերոսին: Ի՞նչն էր Լևոնի դժբախտության պատճառը. կարո՞ղ էր այլ կերպ վարվել Լևոնը: 5մ.

3.Նկարագրի՛ր Դուրյան սիրահարին «Սիրել» բանաստեղծության տողերով: Ինչպիսի՞նն է Դուրյանի սիրո աշխարհը: Գրի՛ր Դուրյանին վերաբերող մեկ շրջասույթ: 5մ.

4.Ի՞նչ տչամադրություններ են արտահայտված Վահան Տերյանի«Հրաժեշտի գազել»- ում: Ցո՛ւյց տուր հակադիր տրամադրությունները: Ի՞նչ շրջասույթ գիտես Տերյանի մասին: Ի՞նչ է գրել Չարենցը Տերյանի հիշատակին(ընդունելի է անգամ 1 տողը): 5մ.

Հանձնաժողովի նախագահ՝ Ս.Աբազյան